Հայտարարվում է մրցույթ՝ ՙՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ գյուղի N2 միջնակարգ դպրոց՚ ՊՈԱԿ-ի «Ֆիզկուլտուրա» ( 6 դասաժամ), «Տեխնոլոգիա»( 7 դասաժամ) և «Երաժշտություն»(3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորում և հարցազրույց:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձեւ 1),

-մեկ լուսանկար 3x4 չափի,

-մարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-ՙՀանրակրթության մասին՚ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը նշված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, համեմատելուց հետո մնօրինակները վերադարձնում:Եթե նախատեսված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի փետրվարի 13-ից մինչև փետրվարի 24-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի փետրվարի 28-ին՝ ժամը 14:00-ին, Կարմիրգյուղի N2 միջնակարգ դպրոցի շենքում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Կարմիրգյուղ, N2 միջնակարգ դպրոց, Գարեգին Նժդեհի փ. 28: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094)206651 հեռախոսահամարով: